

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՄԱԳՐԸ*

Լենա Սուլեյմանյան

Բանալի բառեր՝ ներառական կրթություն, ինտեգրացիա, խորականություն, կրթության նախնական կրթության առանձնահատուկ պայմաններ, սոցիալականացում:

Կրթության ոլորտի ներկա փուլի զարգացումները սերտողեն կապված են կրթական հանրության զարգացման միջազգային միտումների հետ: Առաջ են քաշվում այն պիտի արժեքներ, ինչպիսիք են հանրության առանձնահատուկ պայմաններ, ազատությունը, արդարությունը, հարգանքն ու դիմումների հանդեպ և քաղաքացիական հասարակությանը բնորոշ այլ արժեքներ:

Սա ենթադրում է ազգային դպրոցի համապատասխանեցում ժամանակի պահանջներին, որի գիշավոր նպատակը նաև ազդական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանի հորեն զարգացած, հայրենական պատրաստված և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է [1]:

Կրթական ծառայությունների հասանելիության խնդիրը միջազգային հանրության քննարկման թիրախում հայտնվեց 1990-ականներին, երբ քննունվեցին երեխանների իրավունքների պաշտպանության ոլորտում երկու կարևորագույն փաստաթղթեր՝ Երեխանների իրավունքների Կոնվենցիան [2] և «Կրթությունը բոլորի համար» համաշխարհյան հոչակագիրը:

Ներառական կրթության /ՆԿ/ գաղափարական և հիմնադրույթային սկզբունքների մշակումը տեղի ունեցավ 1994թ-ին Սալամանկայում ստորագրված համանուն հոչակագիր շրջանակներում, որը վերահստատվեց 2000թ-ին Սենեգալում՝ կրթության համաշխարհային ֆորումի ընթացքում: Սալամանկայի հոչակագործ և գործողությունների շրջանակով ամրագրվեց կրթության առանձնահատուկ պահմանների կարիք ունեցող երեխանների, երիտասարդների և տարեցների համար կրթության կազմակերպումը: Մասնավորապես, հոչակագիր համաձայն, յուրաքանչյուր երեխա ունի կրթական առանձնահատկություններ և կրթության հիմնարար իրավունք: 2005թ-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն՝ շրջանառության մեջ որեց երկու կարևորագույն հասկացությունների սահմանումները՝ «Ներառում» և «Ներառական կրթություն»: «Ներառում» սահմանվեց իբրև բոլոր սովորողների կարիքների հասցեագրումն ուղղված գործընթաց, որը տեղի է ունենում ուսման, մշակույթի և համայնքներում մասնակցությունը բարձրացնելու և կրթության մեջ և կրթությունից մեկուսացումը մվագեցնելու միջոցով: ՆԿ-ը, համապատասխանաբար, սահմանվեց որպես գործընթաց՝ ուղղված ուսումնառողների բազմազանությունից բխող կարիքների բավարարմանը՝ կրթության մեջ և կրթությունից մեկուսացումը նվազեցնելու միջոցով: ՆԿ-ը բնութագրվում է վեց առանձնահատկություններով. 1. կրթությունը պետք է հիմնվի բազմազանության, այլ ոչ թե միանմանության սկզբունքի վրա, 2. կրթական գործընթացը պետք է կազմակերպվի այնպիսի մեթոդներով և մոտեցումներով, որոնք ուղղված են յուրաքանչյուր երեխայի առանձնահատկություններից բխող կարիքների բավարարմանը, 3. դպրոցները պետք է մշակեն այնպիսի առարկայական

* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

պլաններ, որոնք կրապանսավորեն միասնականությունը և յուրահատկությունը, 4. դպրոցը պետք է բացահայտի և չեղոքացնի ուսումնական կյանքում լիարժեք մասնակցությունը խոշջնուությունները բոլոր աշակերտների համար, 5. ՆԿ-ը ենթադրում է կրթական գործընթացների կազմակերպման և կառավարման խորքային և երկարաժամկետ փոփոխություններ, 6. ՆԿ-ը ենթադրում է աջակից կառուցների և ռեսուրսների ստեղծում՝ ուսուցչական, աղմինիստրատիվ անձնակազմի, աշակերտների և ծնողների և ՆԿ համակարգի այլ շահարուների համար: ՆԿ-ը նպատակ ունի ապահովելու որակյալ կրթություն խորականության ցանկացած ձևի բացառման միջոցով [3]:

2008թ. ժննում կայացած Կրթության միջազգային կոնֆերանսի 48-րդ համաժողովի շրջանակներում քննարկման դրված առանցքային դրույթները վերաբերվում էին ՆԿ հայեցակարգային հիմքերի զարգացմանը և ՆԿ քաղաքականությունների մշակմանը: Խնդրություց էին մասնավորապես «ՆԿ», «Կրթություն բոլորի համար» և «Կրթության մեջ ինտեգրում» հասկացությունները, որոնք հաճախ նույնացվում են, սակայն բովանդակում են սկզբունքայնորեն տարբեր նպատակներ և խնդիրներ: «Կրթությունը բոլորի համար» հայեցակարգը չպետք է նույնացվի «ՆԿ» հայեցակարգի հետ: Թեև երկուսն էլ ուղղված են կրթության հասանելիության բարձրացմանը, այդուհանդերձ ՆԿ-ը նպատակ ունի ապահովելու որակյալ կրթություն՝ խորականության ցանկացած ձևի բացառման միջոցով: ՆԿ-ն ավելին է, քան մասնակցությունը և հասանելիությունը: Այս կոչված է յուրաքանչյուրի անհատական կարողությունների զարգացմանը՝ որակյալ կրթություն տրամադրելու միջոցով: ՆԿ-ը չպետք է նույնացվի նաև ինտեգրում հասկացության հետ: Ինտեգրումն ապահովում է ԿԱՊԿՈՒ անձանց մասնակցությունը կրթական գործընթացներում, իսկ ներառումը ամրագրում է որակյալ կրթություն ստանալու բոլորի իրավունքը: Ավելին՝ ինտեգրման դեպքում աշակերտները իրենք պետք է հարմարվեն առկա դպրոցական համակարգին /առարկայական պլաններին, դասավանդման մեթոդներին, արժեքներին և այլն/: ՆԿ-ի դեպքում դպրոցն ինքն է փոխակերպվում, որպեսզի բավարարի յուրաքանչյուրի առանձնահատուկ կարիքները: Այսինքն՝ այս դեպքում ոչ թե աշակերտն է հարմարվում դպրոցին, այլ դպրոցն է հարմարվում աշակերտներից յուրաքանչյուրին:

Սկզբունքորեն Արցախի Հանրապետությունում կրթության բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտը՝ ԱՀ Սահմանադրություն, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Պետական ոչ առևտորային կազմակերպությունների մասին», «Հանրակրթության մասին» օրենքները և այլ իրավական ակտեր, հավասար պայմաններ ու հնարավորություններ է նախատեսում յուրաքանչյուր սովորողի համար՝ ելեմենտ կրթության հասանելիության ու մատչելիության զաղակարից [4]: Այս համատեքսուում 2005թ. Հայաստանի Հանրապետությունը, 2007թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը վավերացրին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ անձանց կրթության մասին օրենքը, որով կարգավորվում է ԿԱՊԿՈՒ անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթություն ստանալու իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը [5]:

Կրթության կազմակերպման թվայացական նոր ձևաչափը որակական և գաղափարական արումներով միանշանակ չընդունվեց հասարակության կողմից: Հայ դպրության սկզբնավորումից ի վեր, ինչպես բացահայտում են սկզբնադրյուրները, խորականությունը տեղ չի ունեցել կրթական դաշտում, ավելին, ուսուակները պետական գերխնդիր էր [6]: 19-րդ դարում հայ մեծ մանկավարժ Խովովանը առաջ քա-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

շեց բոլոր երեխաները պետք է սովորեն միասին՝ անկախ խոլու, կույր, հաշմանդամ, աղքատ կամ հարուստ, տղա կամ աղջիկ լինենու փաստից... և ուսուցիչները պետք է համապատասխան հմտություններ ունենան վերջիններիս հետ աշխատելու համար գաղափարը:

2010 թվականի սեպտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՍԱԿ-ի կոմվենցիան, որով ստանձնեց պարտավորություններ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանը և պաշտպանությանը:

Տարիներ շարունակ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ դրսևորված նախապաշարմունքը, անտարբերությունն ու վախը բերել են մեկուսացման և խոշընդուռել նրանց զարգացումը: Մեկուսացումն իր հերթին բերել է նրան, որ մարդիկ չունենալով բավարար գիտելիքներ, վախենում էին հաշմանդամություն ունեցող մարդկանցից՝ մտածելով, որ նրանք կարող են ագրեսիվ լինել: Այսպես 1760-ականներից եվրոպական պետություններում բացվում են առաջին հասուկ դպրոցները խոլու, համր կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Շրջանառության մեջ է դրվում գժանցմեր հասկացությունը: Որևասատանի պարագայում Պետրոս Մեծի և Եկատերինա II-ի ժամանակաշրջանում մանկությունը պետության պաշտպանության ու հոգածության մերքու էր գտնվում, մեծ ուշադրություն է դարձվում հաշմանդամություն ունեցող անձանց: Խորհրդային Միությունում 1960-ական թվականների կեներից սկսեցին գործել առաջին հասուկ դպրոցները, 1975թ. ամենամեծ հասուկ դպրոցը մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների համար բացվեց Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում, 1980-ականների սկզբին Հայաստանում արդեն գործում էր 40 հասուկ դպրոց /բնակչությունը այդ ժամանակ կազմում էր 3.500.000/ [7]:

Ներկայում հաշմանդամության ընկալման վերաբերյալ գոյություն ունեն և պրակտիկայում կամա թե ականա կիրառվում են երկու մոդելներ՝ թժկական և սոցիալական:

Հաշմանդամության թժկական մոդելը հաշմանդամությունը սահմանում է որպես թժկական երևոյթ հիվանդ մարդ, ֆիզիկական ծանր վնասվածքներ ունեցող մարդ, ինտելեկտուալ խանգարումներ ունեցող մարդ և այլն: Հայաստանում խորհրդային ժամանակներից ի վեր հաշմանդամությունը համարվել է և համարվում է անձի խնդիրը, որը նշանակում է, որ հաշմանդամությունը հիվանդություն է, որի պատճառով անձի կենսագործունեությունը սահմանափակվում է, և, հետևաբար, ջանքերն ուղղվում են անձի ֆիզիկական վիճակի բարելավմանը: Այս մոդելի վրա հիմնված մոտեցման արդյունքում հաշմանդամություն ունեցող մարդը գրկվում է իր կյանքի համար ինքնուրույն որոշումներ կայացնելու և իր սեփական ընտրությունը կատարելու հնարավորությունից, դարնում է հիվանդ, խնամյալ: Նրա փոխարեն որոշում են կայացնում ուրիշները լինամոդը, ընտանիքը, հասարակությունը: Հասարակությունը սահմանափակում է նրա կրթության, մասնագիտության, աշխատանքի և այլ հնարավորությունները, քանի որ նա հիվանդ է և ունի հիմնականում բուժման, խնամքի և հոգածության կարիք: Հաշմանդամություն ունեցող մարդու կյանքը կախված է մնում ուրիշների կարծիքներից և եզրակացություններից, որն էլ հանգեցնում է նրա սոցիալական մեկուսացմանը և խոշնդուռում է նրա լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին: Այսպիսով՝ թժկական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը դիտարկվում է որպես անձի խնդիր, և պետության քաղաքականությունն ու ջանքերն ուղղվում են անձի բուժմանը, վերականգնմանը:

Զբացարելով հաշմանդամության թժկական մոդելի կարևորությունը՝ հաշմանդամության սոցիալական մոդելը հաշմանդամությունը դիտարկում է որպես հասարակութ-

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՄԱՐՄԻ ԼՐԱՏՈՒ 2018

յան սոցիալ-մշակութային արժեքների հետևանքը: Այս մոտեցումը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և իհմնարար ազատությունների վրա և կոչ է անում ստեղծել լիարժեք մասնակցության հնարավորություններ հասարակության բոլոր քաղաքացիների համար: Հաշմանդամության սոցիալական մոդելը կենտրոնանում է արգելքների և խոչընդոտների վերացման վրա և վստահում է հաշմանդամություն ունեցող մարդու որպես երկրի լիարժեք քաղաքացու, կարողություններին և ներուժին: Այսպիսով՝ սոցիալական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը սահմանվում է որպես անձի առողջական խնդիրների հետևանքը ծեռք բերած ֆունկցիոնալ սահմանափակումների և միջավայրային արգելքների /խոչընդոտների/ ու վերաբերմունքի փոխագործության հետևանք [8]:

Սոցիալական մոդելի վրա հիմնված մոտեցումն էլ հենց կազմում է ՆԿ առանցքը, այն է՝ կրթություն և համայնքային մասնակցություն բոլորի համար, համակարգի հարմարեցում երեխային, խորականության բացառում: Այս առումով էլ հենց կարևոր են ուրոտի օրենսդրական նախաձեռնությունները: Իրավական տեսակետից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության նպատակը հրենց ընդունակություններին ու կարողություններին համապատասխան և առողջությամբ համարժեք ուսումնական միջավայրում նրանց հասարակական հարմարեցման, ինքնապասարկման ունակությունների ծեռքբերման, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքին պատրաստվածության պահովումն է [9]: Անձը կամ երեխան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ճանաչվում է բժշկահոգեբանամանկավարժական հանձնաժողովի եզրակացության հիման վրա /Արցախում այդ գործառույթը իրականացնում է ԿԳՍ նախարարության ԳԹԿ մանկավարժահոգեբանական աջակցության բաժինը/: Նրանց ուսուցման կազմակերպման, կարողությունների, հմտությունների ծեռքբերման համար տրամադրվում է մանկավարժահոգեբանական խմբի աջակցություն՝ հոգեբան, հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխանների խումբը միատարդ խումբ չէ, և մեծամասամբ նրանց կարելի է տարբերակել այնպիսի բնորոշչիչներով, ինչպիսիք են՝ հաշմանդամությունը, տնտեսական կարգավիճակը, էթնիկական պատկանելությունը կամ վերջիններին համարդրությունը: Ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում պետական աջակցությունից օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող հետևյալ երեխանները.

ա/ խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչութային և խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխանները,

բ/ լսողության խանգարում՝ չլսող լսով/, թույլ լսող կամ լսողության կորուստ ունեցող երեխանները,

գ/ մեսողության խանգարում՝ կույր, թույլ տեսնող, ուշ կուրացած, շլություն ունեցող երեխանները,

դ/ մտավոր հետամնացություն ունեցող երեխանները,

ե/ հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխանները,

զ/ հոգեբանական զարգացման խնդիրներ՝ ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ ունեցող երեխանները,

է/ վարքային և հուզակամային ոլորտի խանգարումներ ունեցող երեխանները [10]:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

ԼՂՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 2-ի N775-Ն որոշմամբ սահմանվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցման հրավունքը՝ հիվանդությունների ցանկը [11]:

Արդյունավետ ներառում իրականացնելը ենթադրում է ծնող-երեխա-դպրոց առանցքի փոխվստահության վրա հիմնված տերու համագործակցություն: Անկախ այն հանգամանքից, թե որ խնդիրն է պատկանում երեխան, կրթական գործընթացի ողջ պատասխանատվությունը իր վրա է վերցնում ուսուցիչը: Ուսուցիչը մասնագիտությունը առավել մարդկային և ստեղծագործական մասնագիտություն է, և ուսուցիչն է պատասխանատու յուրաքանչյուր աշակերտի անձի ծևավորման գործում ձիցտ հիմնաքարտ դնելու համար: Սակայն ողորոշ ուսումնասիրությունները թույլ են տալիս արձանագրել հակասական զնահատականներ: Չնայած ՆԿ հասկացությունը հայ կրթական դաշտ է մտել 2001թ-ից, երբ Երևանի թիվ 27 միջնակարգ դպրոցի և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև կնքվեց եռակողմ համաձայնագիր, որի համաձայն՝ դպրոցը ճանաչվեց հանրապետությունում ներառական կրթություն իրականացնող առաջին հանրակրթական հաստատությունը [12], առ այսօր գաղափարական առումով միանշանակ վերաբերնունք չի գրանցվել: Այստեղ առաջնային է ուսուցիչների համար համապատասխան գիտելիքներ, հավելյալ ժամանակ ու նոտիվացիա չունենալու հանգամանքը: Մյուս կողմից աջակցող խնդիրի մանկավարժները նույնպես համապատասխան վերապատրաստումների կարիք ունեն, դպրոցներն էլ չունեն համապատասխան միջազգային հարմարեցումներ:

Փորձն այսօր ցույց է տալիս նաև, որ ներառական կրթահամակարգում ընդգրկված հաստուկ կարիքներով սովորողի առաջադիմությունն ու հաջողությունները կախված են ոչ միայն երեխայի ընդունակությունից կամ ներգրավված մասնագետների ու րակավորումից, այլ նաև ծնողի իր երեխայի հանդեպ ունեցած վերաբերնունքից, դիրքորոշումից: 2013-2014թթ. իրականացված փորձարարական հետազոտության արդյունքները պարզել են, որ նման ընտանիքներում ծնողների մեծ մասը չի ընդունում, հուզականորեն մերժում է իր երեխային, չի հարգում նրա անհատականությունը, չի համակրում նրան, նրանց համարում են անհաջողակներ: Միայն ծնողների չնչին սուլուսն է, որ երեխային ընդունում են այնպիսին, ինչպիսին կա: Այս երևոյթը միանշանակ ծևավորվում է ծնողների ցածր ինքնազնահատականից, որն էլ իր ագրեցությունն է ունենում երեխայի ինքնաշխատունակ գործոնի վրա [13]:

Նման պարագայում ներառական կրթությունը կոչված է ապահովելու երեխայակենտրոն կրթություն, որտեղ առաջնայինը երեխայի անձնային որակների զարգացումն է՝ ի նպաստ նրա, համայնքի, ապա և հայրենիքի ապագայի: Մասնագետները նշում են, որ ներառական կրթության ծրագրի շրջանակներում ընդգրկված սովորողները կարողանում են ինտեգրվել հասարակությանը, միջանձնային հարաբերություններում ազատվել թերարժեքության բարդությունը, ծեռքբերել համագործակցելու, խնդիրների լուծելու հմտություններ: Ոչ հաշմանդամ երեխաների մոտ էլ ծևավորվում են գրասրտության, ուղիղներին օգնելու, ապրումակցելու պատրաստականություն, «ոչ իրենց նմանների» հանդեպ հանդուժողականության գագումներ և այլն [14]:

Համաշխարհային փորձն այսօր հուշում է, որ միմիայն օրենսդրական դաշտի ապահովումը ներառական կրթության արդյունավետ իրականացման գրավական չէ: Նույնիսկ զարգացած պետությունները ցուցաբերում են մեծ զգնություն՝ «օգնել առանց վնասելու» նկատառումով: Այս պարագայում հետաքրքիր են թվական ցուցանիշները. 2016-2017թթ. ՌԴ-ում ներառական կրթություն են իրականացնում 11 հազ. դպրոցներում [15], Հայաստանի տարածքում առկա 1464 դպրոցներից միայն 291-ն է

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

պաշտոնապես համարվում ներառական կրթություն իրականացնողներ, ընդգրկված երեխաների թիվը մոտ 7000 է [16]: Արցախի Հանրապետությունում գործող 216 դպրոցներից ներառական կրթություն իրականացվում է 98 դպրոցներում, 23200 աշակերտներից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունի 416 սովորող [17]:

Բազմաթիվ բարեփոխումներն այսօր բերել են նրան, որ ներառական կրթության լավագույն փորձը Հայաստանում դիտարկելի է տարրական դասարանում, սակայն դեռ պետք է մշակվի այնպիսի համակարգ, որը կապահովի որակ՝ հաշվի առնելով երեխայի զարգացման վրա ազդող սոցիալ-տնտեսական պայմանները, մշակութային արանձնահատկությունները: Արաջնահերթ՝ ներառական կրթության ընդդիմախոս գանգվածի մոտ պետք է կարծրատիպային մտածելակերպը փոխվի:

Ներառական կրթության իրականացման հաջողված փորձ ունեցող պետությունների շարքում այսօր առանձնանում է ֆինանսան դպրոցը: Հաջողության գրավականը համակարգում բարձր որակավորում ունեցող, պատրաստակամ, մոտիվացված ու անկախ ուսուցիչների առկայությունն է համարվում [18]:

Կանադայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ, Գերմանիայի և այլ եվրոպական պետությունների ոլորտում ունեցած փորձն է ամրագրում է, որ ներառական կրթության ճիշտ ներդրման պարագայում երեխաները կայանում են սոցիալապես, աղապտացվում սոցիոմին, կարողանում են ծեռքբերել աշխատանք ծառայությունների մատուցման ոլորտում /ձաշարան, խանութ, հյուրանոց/ [19]:

Հետևելով Հայաստանի օրինակին՝ 2016թ. մարտի 10-ին ԼՂՀ կառավարությունը N96-Ա որոշմամբ նախատեսեց մինչև 2022թ. անցնել համընդիանուր ներառական կրթության համակարգի [20]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կրթության մասին ԼՂՀ օրենք, հոդված 4:
2. 28-րդ հոդվածով Կոնվենցիան երեխաների համար երաշխավորում է անվճար և պարտադիր նախնական կրթություն և պահանջում է ՍՍԿ-ի մասնակից պետություններից ինչպես հանրակրթական, այնպես էլ մասնագիտական զարգացման տարբեր ձևերի խրախուսումը, բոլոր երեխաների համար դրա հասանելիության ապահովումը և անվճար կրթության կազմակերպմանն անհրաժշտ պայմանների ընդունումը, <http://www.parliament.am>
3. <<-ում ներառական կրթության իրականացման գնահատում, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2013, էջ 20-21:
4. Կրթության մասին ԼՂՀ օրենք, հոդված 5:
5. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենքը:
6. Կորյուն, Վարք Մաշտոցի, Եր., 2005, էջ 60-61:
7. Հարությունյան Ս., Ներառական կրթություն իրականացնող մանկավարժների վերապատրաստման նյութեր, 2016:
8. Աղամյան Հ., Հաշմանդամության բժշկական և սոցիալական մոդելներ. կրթական կարիքի մի ձևից մյուսին անցնելու անհրաժեշտությունը, «Ներառական կրթություն ծանանակակից խնդիրներն ու մարտահրավերները» միջազգային գիտագործնական գիտաժողովի հոդվածների ժողովածու, էջ 13-15:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀԾՏՈՑ ՀԱՍԱԼԱՄԱՐՄԻ ՂՈՒՄԾՈՒ 2018

9. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենքը:
- 10.«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենքը, հոդված 5.2:
11. edu.nkr.am:
- 12.ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2013:
- 13.Մացականյան Ն., Ծնողների կողմից երեխայի հատուկ կրթական կարիքների ընդունման անհրաժեշտությունը որպես երեխայի ինքնազնունման կարևորագույն գործոն, «Ներառական կրթություն. ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները միջազգային գիտագործնական գիտաժողովի հոդվածների ժողովածու, էջ 83:
- 14.Թադևոսյան Հ., Հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները, Մանկավարժություն 1-2. 2006, էջ 106-114:
15. www.edu.ru
16. տես՝ <https://armenpress.am>
17. Տվյալները տրամադրել է ԿԳՍՆ ԳԹԿ մանկավարժահոգեբանական աջակցության բաժինը
- 18.Հարությունյան Մ., Տարրական դպրոցի ուսուցչի դերը ներառական կրթություն իրականացնող հայկական և ֆիննական դպրոցներում, «Ներառական կրթություն. ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները» միջազգային գիտագործնական գիտաժողովի հոդվածների ժողովածու, էջ 53:
19. Խովանդարյան Ս., Ապագա դասվարներին ներառական կրթություն իրականացնելուն նախապատրաստման մեթոդական մոտեցումներ, ԿՈՎԿԱՍԸ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՒՆ գիտաժողովի հոդվածների ժողովածու, Ստեփ., 2017, էջ 435:
20. edu.nkr.am

ԱՄՓՈՓԱԳԻՐ Ներառական կրթության նախահիմքերը Լենա Սոլեյմանյան

Սույն հոդվածում ներկայացվում է ներառական կրթության համակարգի ներդրման նախահիմքերը, ոլորտը կարգավորող իրավական դաշտը, առկա վիճակը, զարգացման միտումները: Այն կոչված է ապահովելու երեխայակենտրոն կրթություն, որտեղ առաջնայինը երեխայի անձնային որակների զարգացումն է հօգուտ նրա, համայնքի, ապա և հայրենիքի ապագայի:

Բազմաթիվ բարեկինխումներն այսօր բերել են նրան, որ ներառական կրթության լավագույն փորձը Հայաստանում դիտարկելի է տարրական դասարանում, սակայն դեռ պետք է մշակվի այնպիսի համակարգ, որը կապահովի որակ՝ հաշվի առնելով երեխայի զարգացման վրա ազդող սոցիալ-տնտեսական պայմանները, մշակութային առանձնահատկությունները: Ներառական կրթության ընդրիմախոս զանգվածի մոտ կարծրատիպային մտածելակերպի փոփոխումն առաջնահերթ է:

РЕЗЮМЕ
Основы инклюзивного обучения
Лена Сулейманян

Ключевые слова: инклюзивное образование, интеграция, дискриминация, доступ к образованию, условия специального образования, социализация.

В статье представлены принципы инклюзивного образования, регулирующая ее правовая база, текущая ситуация, тенденции развития. Они предназначены для обеспечения образования, ориентированного на ребенка, где приоритетом является развитие личности ребенка на благо общества, а затем родины.

В настоящее время многие реформы привели к тому, что в начальных классах наблюдается хорошая практика инклюзивного образования в Армении, но необходимо развивать ее для обеспечения качества с учетом социально-экономических условий и культурных особенностей, влияющих на развитие ребенка. Приоритетным является изменение стереотипного мышления в отношении инклюзивного образования.

SUMMARY
The fundamentals of inclusive education
Lena Suleymanyان

Keywords: inclusive education, integration, discrimination, access to education, special education conditions, socialization

The article presents the principles of inclusive education, its legal framework, current situation, development trends. It is designed to provide education focused on the child, where the priority is to develop the personality of the child for the benefit of society and the motherland.

At present, many reforms have led to the fact that there is a good practice of inclusive education in primary classes in Armenia, but it is necessary to develop it to ensure quality, taking into account the social and economic conditions and cultural characteristics that affect the development of the child. Priority is the change in stereotyped thinking about inclusive education